ԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ (1917—1920 թթ.)

Հ. Խ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

1917 թ. փետրվարից Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձություններն իրենց վրա սևեռեցին համաշխարհային հասարակության ուշադրությունը։ Հեղափոխական փոթորկի աճի պայմաններում տարբեր երկրների բազմաթիվ սոցիալիստներ, որոնք դեռ երեկ իրար վերաբերվում էին որպես թշնամիներ, ելք էին որոնում մերձենալու և ամրապնդելու միջազգային սոցիալիստական կապերը։ Օրակարգում դրվեց միջազգային սոցիալիստական կոնֆերանս հրավիրելու հարցը։ Չեզոք երկրների սոցիալիստների նախաձեռնությամբ 1917 թ. ապրիլին ստեղծվեց նախապատրաստական հատուկ կոմիտե։ Այն հայտնի է Հոլանդա-սկանդինավյան կոմիտե անունով։ Մշակվեց պլատֆորմ, որտեղ հատուկ տեղ էր հատկացվում ընդհանուր զինաթափման, արտաքին քաղաքականության դեմոկրատացման, ժողովուրդների ինքնորոշման հարցերին։ Կոմիտեի պլատֆորմը ներառում էր այն գաղափարները, որոնք հետագայում (1918 թ. հունվարի 8) ընկան ամերիկյան կոնգրեսին պրեզիդենտ Վ. Վիլսոնի հղած ուղերձի հիմքում։ Դրանք ստացան Վիլսոնի 14 կետեր անունը։ Կոմիտեի ղեկավոր խնդիրը Ստոկհոլմում միջազգային սոցիալիստական կոնֆերանսի հրավիրումն էր։ Սոցիալիստական բոլոր կուսակցություններին ուղղած կոչում կոմիտեն նշում էր, որ կոնֆերանսը պետք է նպաստի պատերազմի դադարեցմանը և դեմոկրատական հաշտության կնքմանը։

Հոլանդա-սկանդինավյան կոմիտեի ներկայացուցիչ Բորգբյերգը 1917 թ. ապրիլին ժամանեց Պետրոգրադ։ Նրա առաջարկը, որը փաստորեն գերմանական կառավարության առաջարկն էր, նպատակ էր հետապնդում պատերազմից Գերմանիայի դուրս գալը, քանի որ նա կանգնած էր պարտության փաստի առջև։ Այսպիսով, գերմանական կառավարությունը ձգտում էր սոցիալիստների միջոցով համաձայնության գալ Անտանտի երկրների հետ։ Ռուսական մենշևիկներն ու էսէռներն անմիջապես տվեցին իրենց համաձայնությունը։ Հարցը քննարկվեց նաև բոլշևիկների Ապրիլյան (7-րդ) կոնֆերանսում։ Վ. Նոգինի զեկուցումից հայտնի է դառնում, որ Ստոկհոլմում նախատեսվող կոնֆերանսում այլ հարցերի հետ պետք է քննարկվեր նաև Հայաստանի անկախության հարցը։ Բորգբյերգն առաջարկում էր հաշտության հետևյալ պայմանները. Գերմանիան հրաժարվում է իր նվաճումներից, Լեհաստանը ինքն է որոշում ում հետ գնալ՝ Ռուսաստանի, թե՞ Գերմանիայի, Բելգիան, Ռումինիան, Սերբիան, Չերնոգորիան վերականգնվում են, Բուլղարիան ստանում է Մակեդոնիայի մի մասը, իսկ Հայաստանի հարցը պետք է որոշի կոնգրեսը[1]։ Սոցիալիստները նպատակահարմար էին գտնում Հայկական հարցը թողնել կոնֆերանսի որոշմանը։ Հետաքրքիր է, որ երիտթուրքերը, իրենց ներկայացնելով որպես սոցիալիստներ, կոնֆերանսին մասնակցելու համար Ստոկհոլմ էին գործուղել իրենց պատվիրակներին՝ իթթիհատական Ն. Մասլի էֆենդուն և դոկտոր Հուսեյն Զադե Ալի բեյին։ Նրանք Ստոկհոլմ ժամանեցին հատուկ հուշագրով, որում անտեսված էին հայերի եղեռնը և թուրքերի այլ ոճրագործությունները հայ ժողովրդի

---

[1] Седьмая (Апрелевская) Всероссийская конференция РСДРП(б), М., 1958, с. 114.

նկատմամբ։ Հուշագրում պահանջվում էր «հանուն թուրքական դեմոկրատիայի՝ ազգերի ինքնորոշման իրավունք առանց սպիտակների, դեղինների և սևերի բաժանման», «գաղտնի դիվանագիտության վերացում» և այլն։ Ստոկհոլմ ժամանեց նաև Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ Ռոստոմ Զորյանը, որի ներկայացրած հուշագրում պահանջվում էր Ռուսահայաստանի ինքնավարություն՝ ռուսական հանրապետության կազմում, թուրքական տիրապետությունից թուրքահայաստանի աղատագրում և աղատ, անկախ Հայաստանի ստեղծում՝ վեց հայկական վիլայեթներից ու Կիլիկիայից, Հայաստանի միջազգային չեզոքության երաշխիք և Թուրքիայի կողմից հայերին հասցված վնասների հատուցում։ Հասկանալի է, որ այդ պահանջները կհանդիպեին կոնֆերանսի դիմադրությանը (հատկապես գերմանա-թուրքական բլոկի մեջ մտնող երկրների սոցիալիստական կուսակցությունների)։ Սակայն Ստոկհոլմի կոնֆերանսը տեղի չունեցավ։ Նրան մասնակցելու համաձայնություն տվեցին միայն մի քանի կուսակցություններ՝ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (մեծամասնություն), ավստրիական, հունգարական, հոլանդական, սկանդինավյան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները և ռուսական մենշևիկները։

Երկրորդ ինտերնացիոնալի հետպատերազմյան միջազգային առաջին կոնֆերանսի նախապատրաստումն ավարտվեց 1918 թ. վերջին։ Նախապատրաստական աշխատանքները ղեկավարում էին Երկրորդ ինտերնացիոնալի Գործկոմի նախագահ է. Վանդերվելդեն և քարտուղար Կ. Հյուիսմանսը։

Ստանալով Անտանտի Գերագույն խորհրդի համաձայնությունը, 1919 թ. փետրվարի 3-ին Բեռնում հրավիրվեց հետպատերազմյան առաջին սոցիալիստական կոնֆերանսը[2], որին մասնակցում էին 26 երկրների 102 պատվիրակներ։ Մասնակիցների թվում էին նաև Հայաստանի ու Վրաստանի ներկայացուցիչները[3]։ Կոնֆերանսը բացեց շվեդական սոցիալ-դեմոկրատ Կ. Բրանտինգը։ Նա փորձեց ցույց տալ, որ Երկրորդ ինտերնացիոնալն ամեն ինչ արեց, որպեսզի կանխի պատերազմը, բայց նրա ջանքերը հաջողություն չունեցան[4]։

Անդրադառնալով «ռուսական հարցին», կոնֆերանսը գերմանական կառավարությանը խնդրեց, որպեսզի վերջինս միջնորդի՝ Ռուսաստան Երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակություն ուղարկելու թույլտվություն ստանալու համար, սակայն դա տեղի չունեցավ։

Կոնֆերանսում քննարկվեց նաև տարածքների հարցը, որը շատ էր հուզում հատկապես փոքր ժողովուրդներին և նոր ստեղծված պետություններին։ Կ. Բրանտինգն առաջարկեց, որպեսզի հաղթող պետություններն ի չարը չգործադրեն իրենց հաղթանակը, որը կարող է «նոր կոնֆլիկտների» պատճառը դառնալ։ Միաժամանակ, նա փոքր ազգերին խորհուրդ էր տալիս «իրենց պահանջներում հեռուն չգնալ՝ ոգևորված հաջողություններից»[5]։ Հարցի քննարկմանն ակտիվորեն մասնակցեցին վրացական պատվիրակությունն Ա. Չխենկելու և հայկական պատվիրակությունը՝ Մ. Վարանդյանի գլխավորությամբ։

Դեռևս 1918 թ. նոյեմբերին Միջազգային սոցիալիստական բյուրոյում ստացվեց վրացական սոցիալ-դեմոկրատական կուսակցության (մենշևիկների) նամակը, որ ստորագրել էին Ծերեթելին, Ժորդանիան, Չխենկելին, Ռամիշվիլին և Գեգեչկորին։ Նամակի սկզբում եվրոպական իրենց համա-

---

2 Կոնֆերանսը նախապես որոշված էր հրավիրել Փարիզում։ Բայց ֆրանսիական կառավարությունը հրաժարվեց անցաթղթեր տալ հակառակորդ երկրների պատվիրակներին։

3 Palm Dutt The International, London, 1920, p. 13.

4 Правда, 8. II. 1919.

5 Նույն տեղում։

խոհներին ծանոթացնելով Վրաստանի դարավոր պատմությանը, վրաց մենշևիկների առաջնորդները նշում էին, որ ամբողջ վրաց ժողովուրդը մեծ գոհունակությամբ ընդունեց Փետրվարյան հեղափոխությունը՝ այն համարելով իսկական դեմոկրատիայի հաղթանակ։ «Որպես համառուսական հեղափոխական շարժման մասնակիցներ,—գրում էին նրանք,—մենք առաջինը մտանք Ձեր ինտերնացիոնալ ընտանիքի մեջ»[6]։ Առաջին համաշխարհային պատերազմը համարելով չարիք, նամակի հեղինակները Փետրվարյան հեղափոխության մեջ տեսնում էին «լավագույն հույսերի իրականացում, ողջ մարդկության ազատագրության արշալույս, ժողովուրդների համաշխարհային եղբայրության վերածննդի արշալույս»[7]։ Նրանք Հոկտեմբերյան հեղափոխության և բոլշևիկների կողմից իշխանության գրավման մեջ էին տեսնում երկրում սկսված քաղաքացիական պատերազմի պատճառը, որի հետևանքով Ռուսաստանը տրոհվեց մասերի, իսկ Անդրկովկասն էլ կտրվեց հյուսիսից։ Սակայն Ռուսաստանից Անդրկովկասի բաժանումը մենշևիկները ընդունում էին որպես փրկություն, քանի որ եթե Ռուսաստանում սկսված քաղաքացիական պատերազմն իր մեջ առներ նաև Անդրկովկասը, ապա ազգամիջյան բախումներն անխուսափելի կդառնային[8]։ Ինչպես հայտնի է, Բրեստի հաշտության ստորագրումից հետո Անդրկովկասը ենթարկվեց Թուրքիայի հարձակմանը։ Շուտով թուրքերը գրավեցին երկրամասի տարածքի զգալի մասը։ «Մենք մնացինք մենակ կրակե օղակի մեջ,—գրում էին մենշևիկները,—բոլոր կողմերից շրջապատված թշնամիներով։ Արևմուտքից և հարավից հարձակվում էին թուրքերը, հյուսիսից մեզ սպառնում էին բոլշևիկները...»[9]։ Վրաց մենշևիկների կարծիքով, արտաքին վտանգից փրկվելու համար Անդրկովկասը, այդ թվում և Վրաստանը, պետք է ստանա եվրոպական երկրների օգնությունը[10]։ Քանի որ Վրաստանը վեր է ածվել ամենադեմոկրատական երկրի և ազատության խորհրդանիշի, գրում էին նամակի հեղինակները, ապա նա կարող է հյուրընկալել այն բոլոր մարդկանց, որոնց «պատերազմը, ռեակցիան և անարխիան դուրս են մղել հարևան երկրներից։ Մասնավորապես, 300 հազար հայ գաղթականներ, նշում էին նրանք,—ապաստան են գտել Վրաստանում»[11]։

Դիմելով Երկրորդ ինտերնացիոնալի առաջնորդներին, վրացական մենշևիկները ինտերնացիոնալի մեջ տեսնում էին «միակ հենարանը... բոլոր վտանգների դեմ» և Վրաստանի ողջ աշխատավորության անունից օգնություն էին խնդրում բոլշևիզմի դեմ մղվող պայքարում։

Երբ հայտնի դարձավ, որ 1919 թ. փետրվարին Բեռնում պետք է տեղի ունենա Երկրորդ ինտերնացիոնալի հետպատերազմյան առաջին կոնֆերանսը, 1919 թ. հունվարին նրա կազմկոմիտեում ստացվեց վրացական պատվիրակության ղեկավար Ա. Չխենկելու նամակն Անդրկովկասում տիրող սոցիալական ու քաղաքական իրավիճակի մասին։ Ա. Չխենկելին իր նամակում ցույց տալով վրացական մենշևիկների անցած ուղին՝ սկսած մենշևիկյան կուսակցության ստեղծման պահից մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, այն միտքն էր զարգացնում, որ այդ կուսակցությունը ցարիզմի օրոք եղել է Անդրկովկասում ամենաուժեղ և ազդեցիկ կազմակերպությունը[12]։ Անդրկովկասյան սեյմի փլուզումը և ինքնուրույն բուրժուական երեք հանրապետությունների առաջացումն Ա. Չխենկելին բացատրում

---

6 Վրաստանի հանրապետության պետական արխիվ (այսուհետև ՎՀՊԱ), ֆ. 1831, ց. 1, գ. 4, թ. 6։

7 Նույն տեղում, թ. 6 հակ.։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, թ. 8 հակ.։

10 Նույն տեղում։

11 Նույն տեղում, թ. 9։

12 Նույն տեղում, թ. 1։

էր ոչ թե ազգամիջյան հակասություններով, այլ արտաքին վտանգով (բոլշևիկների կողմից՝ հյուսիսից, թուրքերի կողմից՝ հարավից և արևմուտքից)։ Ա. Չխենկելին տեսնում էր ինքնուրույն վրացական հանրապետության հրոչակման երկու հիմնական պատճառ. 1. Ադրբեջանը և Հայաստանը համարյա ամբողջովին գրավվել են թուրքերի կողմից, 2. վրաց ժողովուրդն ավելի ուժեղ և գիտակից դեմոկրատիա ուներ, քան հարևան մյուս երկու ժողովուրդները։ «Վրաստանը նախկին Ռուսաստանում միակ երկիրն է,—գրում էր Չխենկելին,—որն առանց կողմնակի օգնության հաղթահարել է անարխիան երկրի ներսում և լիակատար հաղթանակ է տարել բոլոր կողմերից ներխուժած բոլշևիկյան ջոկատների դեմ»[13]։ Նա նշում էր, որ Վրաստանում մտցվել են 8-ժամյա բանվորական օր, ընդհանուր ընտրական իրավունք, դեմոկրատական ազատություններ և ինքնավարություն։

Այդ ժամանակ Վերսալում դեռևս շարունակվում էր խաղաղության կոնֆերանսը։ Վրաստանը Չխեիձեի և Ծերեթելու գլխավորությամբ Փարիզ էր ուղարկել իր պատվիրակությունը՝ նպատակ ունենալով հասնել նրան, որ խաղաղության կոնֆերանսի մասնակիցները ճանաչեն «իրենց անկախությունը՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա»[14]։ Ա. Չխենկելին դա բացատրում էր նրանով, որ Վիլսոնի ծրագիրը նրաշխավորում է մեծ ու փոքր ժողովուրդների անկախությունը։ Ա. Չխենկելին Բեռնի կոնֆերանսի կազմկոմիտեից խնդրում էր. «1) Ճանաչել Վրաստանի սոց.-դեմ. կուսակցությունը որպես Ինտերնացիոնալի ինքնուրույն սեկցիա, տալով նրան համապատասխան ձայների թիվ.

2) Ինտերնացիոնալի կողմից վաղուց հռչակված ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի համաձայն բարձրացնել իր հեղինակավոր ձայնը՝ հօգուտ բոլոր պետությունների կողմից Վրաստանի դեմոկրատական հանրապետության անկախության ճանաչման»[15]։

Անդրկովկասի ներկայացուցիչները Բեռնի կոնֆերանսին ակտիվ մասնակցեցին հատկապես տարածքների հարցի քննարկման ժամանակ։ Դեռ մինչև կոնֆերանսի բացումը՝ 1918 թ. վերջին, տեղի էր ունեցել հայ-վրացական կոնֆլիկտը տարածքների հարցում։ Սա Ա. Չխենկելուն առիթ տվեց կոնֆերանսում հայտարարելու, որ վիճելի տարածքների հարցը քննելու ժամանակ տնտեսական, պատմական և ռազմական գործոնները ոչ մի նշանակություն չունեն, որ «ամեն ինչ լուծվում է էթնիկական սկզբունքով և բնակչության հանրաքվեով»[16]։ Եվ քանի որ հայերը հավակնում էին Թիֆլիսի նահանգի Ախալքալակի գավառին, «որտեղ հայերը (արևմտահայեր) կազմում են մեծամասնություն, հետևաբար, «էթնիկական» պատճառաբանությունն առկա է, մնում է միայն կազմակերպել հանրաքվե, և հարցը լուծված է»[17]։ Այնուհետև Ա. Չխենկելին շարունակում էր իր դիտողությունները. «Եթե այդ բոլորով հանդերձ կխախտվեն հարևանի կենսական շահերը, ավելի վատ խախտողի համար։ Իհարկե, այդ արարողությունը սպանիչ կլիներ ամենից առաջ հայերի համար ինչպես Թուրքիայում, այնպես էլ Անդրկովկասի տարբեր շրջաններում, որտեղ հայերը խառն են ապրում մուսուլմանների հետ։ Բայց հայ-վրացական վեճի շրջանակներում Բորչալուի և Ախալքալակի գավառների մասին այդպիսի արարողությունը կհանդիսանար հայերի համար շահեկան»[18]։

---

13 Նույն տեղում, թ. 2։

14 Նույն տեղում, թ. 4։

15 Նույն տեղում, թ. 5։

16 З. Авалов. Независимость Грузии в международной политике 1918—1921 гг., Париж, 1924, с. 272.

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում։

Բեռնի կոնֆերանսում որոշվեց Երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակություն (պերմանենտ հանձնաժողով) ուղարկել Ռուսաստան՝ «Խորհրդային Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական կյանքին ծանոթանալու նպատակով»[19]։ Այդ առթիվ 1919 թ. մարտի 3-ին Հյուիսմանսի անունով ստացվեց կոնֆերանսում վրացական մենշևիկների պատվիրակության ղեկավար Ա. Չխենկելու և պատվիրակության անդամ Կ. Շավաշվիլու նամակը, որը դարձավ Ինտերնացիոնալի «սոցիալիստական պերմանենտ հանձնաժողովի վրացական սեկցիայի» փաստաթուղթ։ Նրանում առաջարկվում էր, որպեսզի Երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակությունը շրջագայություն կատարի նաև նախկին Ռուսաստանի ազգային, արդեն անկախություն ստացած շրջաններում, գտնելով, որ «դա կարող է ունենալ ոչ պակաս պրակտիկ հետաքրքրություն, քանի որ դրանով հնարավորություն կստեղծվի պատկերացում կազմելու անցյալում միասնական Ռուսաստանում տեղի ունեցող դեպքերի մասին և ճիշտ գնահատելու դրանց պատմական խոր իմաստը»[20]։ Նամակի հեղինակները ցույց էին տալիս, որ Խորհրդային Ռուսաստանը պատերազմ է սկսել բոլոր ազգային պետությունների դեմ և փաստորեն պատվիրակությանը պարտավորեցնում էին Երկրորդ ինտերնացիոնալի հաջորդ կոնգրեսին ներկայացնել «իր աշխատանքի արդյունքները, արտահայտելով իր կարծիքը ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի, այլ նաև անմիջականորեն նրա հետ պատերազմի մեջ գտնվող պետությունների և մարզերի սոցիալիստական կուսակցությունների քաղաքականության ու տակտիկայի մասին»[21]։

Մենշևիկյան պատվիրակության ղեկավարները տեղեկատվական հանձնաժողովի ուշադրությունն էին դարձնում այն բանի վրա, որ մենշևիկները Վրաստանում վարում էին բոլշևիկներին հակառակ քաղաքականություն և տակտիկա։ «Ռուսաստանից անջատված ազգային պետություններից Վրաստանը միակ բացառությունն է ոչ միայն նրանով, որ այն կառավարում են սոցիալիստները,—գրում էին նրանք,—այլ նաև նրանով, որ նրանք այն կառավարում են դեմոկրատական սկզբունքների համաձայն»[22]։ Ա. Չխենկելին Հյուիսմանսից խնդրում էր, որպեսզի կոնֆերանսի պատվիրակությունն անպայման այցելի Վրաստան[23]։

Սակայն Խորհրդային կառավարությունը չհամաձայնեց Երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակության ժամանմանը Ռուսաստան և նրա Վրաստան ժամանումը հետաձգվեց մինչև 1920 թ. սեպտեմբերը։

Տարածքների հարցում Բեռնի կոնֆերանսում հայ և վրաց սոցիալիստների միջև սկսված վեճը չավարտվեց։ Արդեն 1919 թ. մայիսի սկզբին Երկրորդ ինտերնացիոնալի բյուրոյում ստացվեց և քննարկվեց Մ. Վարանդյանի բողոքը վրացական կառավարության դեմ, որը «ճնշում է հայերին, զբաղվում «իմպերիալիզմով» և ակնհայտորեն խախտում այն սկզբունքները, որոնք մինչ այդ ընդունվել էին Բեռնի սոցիալիստական կոնֆերանսում»[24]։

Ինտերնացիոնալի բյուրոն լսեց երկու պատվիրակություններին, որից հետո՝ մայիսի 10-ին, տեղի ունեցավ վրացական և հայկական պատվիրակությունների խորհրդակցություն։ Դրան մասնակցում էին Ա. Ահարոնյանը, Հ. Օհանջանյանը, Մ. Վարանդյանը, Ա. Չխենկելին, Մերեթելին, Ավալիանին և ուրիշներ։ Սակայն նրանք որևէ համաձայնության չեկան։ Ի վերջո վրացական պատվիրակությունն առաջարկեց, որպեսզի անմիջապես ստեղծվի արբիտրաժ հանձնաժողով, որը Բեռնի կոնֆերանսի որոշումների հիման

19 Նույն տեղում, թ. 2։
20 ՎՀՊԱ, ֆ. 1831, ց. 1, գ. 8, թ. 1։
21 Նույն տեղում, թ. 2։
22 Նույն տեղում, թ. 3։
23 Նույն տեղում, թ. 5։
24 З. Авалов. Նշվ. աշխ., էջ 212։

վրա զբաղվի վիճելի տարածքներում հանրաքվե անցկացնելու հետ կապված բոլոր հարցերով և, որպեսզի երկու պատվիրակություններն էլ կայացված համաձայնության մասին տեղյակ պահեն Փարիզի կոնֆերանսին։ Այդ առաջարկը դուր եկավ «դատավորներին»։ Հենդերսոնը հայ-վրացական կոնֆլիկտը որակեց որպես «հարավային տաքարյունություն ոչնչից» և առաջարկեց, որպեսզի վրացական զորքերը և վարչությունը մինչև հանրաքվեի անցկացումը հեռանան վիճելի տարածքներից։ Վրացական պատվիրակությանը պաշտպանեց Հյուիսմանսը, որը հայտարարեց, որ նման և այլ հարցերը պետք է լուծի արբիտրաժ հանձնաժողովը[25]։ Սակայն հայերի համառությունը (հատկապես Մ. Վարանդյանի) այնքան ուժեղ էր, որ Հյուիսմանսը նրանց հանդիմանեց, որ չես ցանկանում ընդհանուր համաձայնության գալ։ Այնպես որ այդ փորձերն էլ որևէ արդյունք չտվեցին։ Մինչ այդ վրացական կառավարությունը նախատեսել էր 1918 թ. նոյեմբերին հրավիրել անդրկովկասյան երեք հանրապետությունների կոնֆերանս, որտեղ պետք է քննարկվեր նաև սահմանների հարցը։ Սակայն այդ կոնֆերանսը բացվեց միայն 1919 թ. մայիսին, երբ Անդրկովկասին սպառնում էր Դենիկինի կամավորական բանակը։ 1919 թ. օգոստոսին, երբ բացահայտ արյունալի ընդհարումներ էին սկսվել հայերի և մուսուլմանների միջև, կոնֆերանսի աշխատանքները վերսկսվեցին։ Իսկ ինչ մնում է Երկրորդ ինտերնացիոնալի բյուրոյին, ապա նա այլևս չզբաղվեց հայ-վրացական հարցերով, քանի որ դրա համար ո՛չ ուժ, և ո՛չ էլ հեղինակություն ուներ։ Ճիշտ է, Հայաստանի և Վրաստանի պատվիրակները մասնակցեցին 1919 թ. ապրիլին և օգոստոսին տեղի ունեցած Երկրորդ ինտերնացիոնալի Ամստերդամի և Լյուցերնի կոնֆերանսներին, բայց այդ մասնակցությունը զուտ ձևական բնույթ էր կրում։ Երկրորդ ինտերնացիոնալի բյուրոն, որ գտնվում էր Բեռնում, ունեցավ բազմաթիվ նիստեր։ Դրանցից մեկում (տեղի ունեցավ 1919 թ. ապրիլի 20—29-ը Ամստերդամում) քննարկվեց նաև Ֆինլանդիայի, Էստոնիայի, Հայաստանի և Ուկրաինայի անկախության, Թուրքիայի ու Հայաստանի սահմանների հարցը[26]։

Երկրորդ ինտերնացիոնալի երկրորդ կոնֆերանսը հրավիրվեց 1919 թ. օգոստոսին՝ Լյուցերնում։ Այն բացեց Հենդերսոնը, որը վերլուծեց աշխարհի քաղաքական դրությունը։

Կոնֆերանսում ճառով հանդես եկավ Ա. Չխենկելին։ Նա հայտարարեց, որ 1919 թ. հունվարին անգլիական զորքերի մուտքը Վրաստան բնակչության բոլոր խավերի կողմից ընդունվեց «մեծ գոհունակությամբ»։ Ըստ նրա, դրա համար կային երկու պատճառներ. նախ՝ վրաց ժողովուրդը հանձին անդլիացիների տեսնում էր Եվրոպայի հնագույն դեմոկրատիայի ներկայացուցիչների, «փոքր, ճնշված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իսկական պաշտպանների» և երկրորդ՝ «անգլիացիները դաշնակիցների հետ միասին Կովկասն ազատագրեցին թուրքական վտանգից»[27]։ Այդուհանդերձ, Ա. Չխենկելին բողոքում էր, որ անգլիացիներն օգնություն են ցույց տալիս Դենիկինին, որը ձգտում էր «ոչնչացնել ինչպես վրացական, այնպես էլ կովկասյան մյուս հանրապետությունների անկախությունը և ազատությունը»[28]։ 1919 թ. փետրվարին Դենիկինի կամավորական բանակը հանկարծակի հարձակում էր գործել վրացական հանրապետության վրա և ոռավել Սոչիի մի մասն ու Սուխումի շրջանի մի մասը։ «Դա,—ասաց Ա. Չխենկելին,—տեղի ունեցավ անդլիացիների պասսիվ հայեցողությամբ, և միայն, երբ վրացական կառավարությունը եռանդուն բողոք հայտնեց Կոստանդնուպոլսում բրիտանական բարձրագույն հրամանատարությանը՝ բրիտանական կառավա-

25 Նույն տեղում, էջ 212, 214։

26 Palm Dutt, նշվ. աշխ., էջ 18։

27 Красный архив, 1927, № 2, (21) с. 169.

28 Նույն տեղում, էջ 170։

բությունը գեներալ Դենիկինից պահանջեց հեռանալ գրաված տարածքներից, որը, պարզ է, վերջինս չկատարեց, իսկ 1919 թ. ամռանը գրավեց նաև Գագրայի շրջանը, ճասապարհ բացելով դեպի Վրաստանի խորքերը»[29]։ Սակայն Ա. Չիրենկինն մոռացավ ասել, որ անգլիական հրամանատարության և վրացական կառավարության միջև դեռևս 1919 թ. փետրվարին լիակատար համաձայնություն էր կայացվել Դենիկինին օգնելու վերաբերյալ։ Բանակցությունները, որոնք տեղի ունեցան նաև հաջորդ ամիսներին, բոլոր հարցերում հանգեցրին լիակատար համաձայնության։ Գլխավորն այն էր, որ բրիտանական էշելոնները անարգել Վրաստանի վրայով օգնություն պետք է հասցնեին Դենիկինին։ Ի պատասխան բարեկամական այդ քայլի, Անտանտի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց վրացական կառավարության պաշտոնական ճանաչման մասին։

1920 թ. հուլիսին տեղի ունեցավ Երկրորդ ինտերնացիոնալի երրորդ կոնգրեսը, որին մասնակցում էին շատ քիչ թվով պատվիրակներ։ Բազմաթիվ այլ հարցերի հետ քննարկվեց նաև «Վերսալի պայմանագրի և միլիտարիզմի վտանգի մասին» հարցը։ Ժնևի կոնգրեսում ընդունված բանաձևում (հեղինակ Լաֆոնտեն) նշվում էր, որ ոչ մի տարբերություն չկա Գերմանիայի նկատմամբ Անտանտի միլիտարիստական քաղաքականության և ծայրամասերում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) բոլշևիկների քաղաքականության միջև[30]։

Կոնգրեսը հաստատեց գաղութային և կանխյալ երկրների մասին Լյուցերնի կոնֆերանսի որոշումը ու որոշեց պատվիրակություն ուղարկել Անդրկովկաս՝ տեղի վիճակին ծանոթանալու և զեկուցագիր պատրաստելու համար։

1920 թ. սեպտեմբերին՝ Ժնևի կոնգրեսից անմիջապես հետո, Վրաստան ուղևորվեց Երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակությունը, որի կազմի մեջ էին Է. Վանդերվելդեն, Դե Բրյուկերը, Ռ. Մակդոնալդը, Ա. Թոման, տիկին Սնոուդենը, Պ. Ռենոդելը, Շոուն, Կ. Հյուիսմանսը և Բրուկկեն։ Պատվիրակությունը Վրաստանում մնաց 10 օր, հանդիպումներ ունեցավ վրաց ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչների հետ։ Մենշևիկներն ամեն ինչ արին, որպեսզի հյուրերին ընդունեն հավուր պատշաճի։ «Սոցիալիստական Եվրոպայի ներկայացուցիչներն այստեղ կտեսնեն ազգային պետություն, որը վճռականորեն ընթանում է սոցիալիզմի ուղիով»[31],—գրում էր «Բորբա» թերթը։ Իսկ Ն. Ժորդանիան հյուրերի պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ հայտարարեց, որ մենշևիկները դեմոկրատական մեծ ռեֆորմներ են իրականացրել քաղաքական, ագրարային և սոցիալական բնագավառներում։ Հյուրերը գովեստի խոսքեր հայտնեցին մենշևիկների հասցեին։ Կ. Հյուիսմանսը մասնավորապես հայտարարեց. «Դուք (վոռդական մենշևիկները—Հ. Դ.) մեր հույսն եք, քանի որ Վրաստանը միակ երկիրն է, որի գլուխ են կանգնած սոցիալիստները։ Ձեր կործանումը մեր կործանումը կլինի, ձեր հաղթանակը՝ մեր հաղթանակը։ ...Մի տապալեք մեր հույսերը»[32]։

Թիֆլիսում տեղի ունեցած ժողովներից մեկում Պ. Ռենոդելը Խորհրդային Ադրբեջանի դեմ պատերազմի կոչ էր անում, ցույց տալով, որ «Վրաստանը պետք է կանգնի Անդրկովկասի ժողովուրդների գլուխ և դժբախտ ադրբեջանցիներին ազատագրի կոմունիստներից, որոնք ոչնչացնում են ամեն մի ազատություն»[33]։

---

29 Նույն տեղում, էջ 171։

30 Борьба, 25. V. 1920.

31 Նույն տեղում, 14. IX. 1920։

32 Նույն տեղում, 17. IX. 1920։

33 Коминтерн, 1920, № 15, с. 3104.

Իր հերթին Կ. Կաուցկին, որը Վրաստան էր ժամանել որպես «մասնավոր» անձ և այնտեղ մնաց երեք ե կես ամիս, Վրաստանից հեռադրեց Լոնդոն՝ Երկրորդ ինտերնացիոնալի գործկոմ, խնդրելով անհապաղ օգնություն ցույց տալ Վրաստանին՝ նրա արդարացի պայքարում[34]։

Տնտեսական ծանր վիճակից Վրաստանի դուրս գալու ելքը Կ. Կաուցկին տեսնում էր այն Եվրոպայի ազդեցությանը ենթարկելու մեջ։ Նա վրաց մենշևիկներին հենց այդպիսի խորհուրդ տվեց իր բազմաթիվ ելույթներում ու «Սոցիալիզմի պրոբլեմները և հեռանկարները Վրաստանում» զեկուցման մեջ, որը լույս տեսավ մենշևիկյան «Էրթոբա» թերթում և առանձին գրքույկով։

Բայց Երկրորդ ինտերնացիոնալի պատվիրակությունը ոչնչով չկարողացավ օգնել Անդրկովկասի ժողովուրդներին։ Շուտով նախ Հայաստանում, իսկ ապա նաև Վրաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր։

ВТОРОЙ ИНТЕРНАЦИОНАЛ И ЗАКАВКАЗЬЕ (1917—1920 гг.)

Г. Х. ДАРБИНЯН

Резюме

В самом начале первой мировой войны Второй Интернационал потерпел крах. И только на последнем этапе войны был поставлен вопрос о созыве международной социалистической конференции. Она предусматривалась в Стокгольме, где наряду с многочисленными вопросами должен был быть обсужден также вопрос о независимости Армении. Но конференция состоялась лишь в феврале 1919 г. в Берне. Фактически Второй Интернационал был восстановлен. Был обсужден целый ряд вопросов, в том числе и вопрос о территориях, который особо волновал малочисленные народы. В обсуждении вопроса активно участвовали грузинская и армянская делегации во главе с А. Чхенкели и М. Варандяном. Как в Берне, так и на других конференциях Второго Интернационала, проходивших в дальнейшем, обсуждение обострившихся армяно-грузинских споров не дало положительных результатов, а Интернационал не смог принять какого-либо серьезного решения по этому вопросу.

Осенью 1920 г. делегация Второго Интернационала прибыла в Закавказье с целью ознакомления с положением дел на месте и составления отчета. Но делегация не смогла ничем помочь народам края, так как в Армении, а затем и в Грузии установилась Советская власть.

---

34 Նույն տեղում, էջ 3105։